

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ  
ՄԵՆԱՆԻՉՄՆԵՐԸ 1909 Թ. ԱԳԱՆԱՅԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՇՐՋԱՆՆԵՐԻ  
ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ԳՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

*Սեդա Պարսամյան*

Օսմանյան կայսրության՝ հայ բնակչության դեմ իրագործված ցեղասպանությունն ուղեկցվեց նաև հազարամյա հայկական մշակութային ժառանգության զանգվածային ոչնչացմամբ կամ այդ արժեքներն այլ նպատակներով կիրառելու բազմաթիվ օրինակներով, որոնք լիովին համապատասխանում են «մշակութային ցեղասպանություն» բնորոշմանը:<sup>1</sup> Մասնավորապես, հայկական կրթամշակութային, հոգևոր հաստատությունները՝ որպես ազգային ինքնության պահպանման կարևորագույն միջոց Օսմանյան կայսրության տարածքում, չնայած գոյատևման համար մղած իրենց մշտական պայքարին՝ շարունակ գտնվել են ոչնչացման վտանգի մեջ և հարվածի տակ առնվել առաջին իսկ հնարավորության դեպքում: Բազմաթիվ փաստեր վկայում են, որ ինչպես 1894-1896 թթ. համիդյան, 1909 թ. Ադանայի ջարդերի, այնպես էլ 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության տարիներին գրեթե բոլոր բնակավայրերում կոտորածներն ուղեկցվել են հայկական մշակութային արժեքների, մասնավորապես՝ պաշտամունքային նշանակության պատմաճարտարապետական հուշարձանների և կրթօջախների ոչնչացմամբ: Ստորև կլստվի 1909 թ. Ադանայի և հարակից շրջանների կոտորածների ընթացքում հայկական մշակութային արժեքների ոչնչացման եղանակների, դրանց օրինակների ու հետևանքների մասին:

Կոտորածների ընթացքում, հատկապես գյուղական բնակավայրերում, եկեղեցին հաճախ հանդիսացել է որպես ապաստարան: Խուճապահար բնակչությունը փրկվելու նպատակով ապաստանել է վանքերում, եկեղեցիներում՝ կարծելով, որ հոգևոր այդ շինությունները զերծ կմնան ավերածություններից, սակայն դա ոչ միայն չի կանգնեցրել, այլև նպաստավոր պայմաններ է ստեղծել ջարդարարների համար՝ հրդեհելով եկեղեցին՝ միաժամանակ ողջակիզել ներսում թաքնված բնակչությանը: Նման օրինակները բազմաթիվ են նաև 1909 թ. ջարդերի ժամանակ: Միայն Ադանա քաղաքում բնակչության համար այդպիսի ապաստարաններ հանդիսացան Սբ Ստեփանոս եկեղեցին, ուր ապաստանել էին շուրջ 2000 հայեր, Սբ Աստվածածին եկեղեցին՝ 1500 հայերով, հայ բողոքականների եկեղեցին և ամերիկյան իգական վարժարանը՝ շուրջ 1000-ական ապաստանողներով, ճիզվիտների եկեղեցին ու հարակից շինությունները՝ 6000 հայերով:<sup>2</sup> Այս առումով ուշագրավ է Անտիոքում իռլանդական-շվեդական երիցական եկեղեցու միսիոներության անդամ Վեր. Ս. Քենեդու հեռագրերից մեկը, որում նա հաղորդում է. «Անտիոքի մէջ Հայք ջարդուեցան... Հոս կացութիւնն յոյժ ծանր է: Եկեղեցիք լի են ապաստանեալներով... կպաշտպանուին Կառավարութենէն»:<sup>3</sup>

1909 թ. կոտորածների ընթացքում ջարդարարներից պաշտպանվելու վերոնշյալ մեթոդը հատուկ է բոլոր այն բնակավայրերին, որոնք զերծ չմնացին արհավիրքից, և գրեթե ամենուրեք ապաստանյալներով լեցուն այդ շինությունները ոչնչացվեցին զինվորների կողմից: Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյան-

1 Տնւ, Lyndel V. Prott, Ethnocide, Encyclopedia of Genocide and Crimes Against Humanity, Dinah L. Shelton [editor in chief], vol. 1, Thomson Gale, 2005, p. 309-310.

2 Տնւ «Արարատ», Պաշտօնական ամսագիր Հայրապետական աթոռոյ Ս. Էջմիածնի, յուլիս-օգոստոս, Ս. Էջմիածին, 1909, էջ 663, ինչպես նաև Թ-էրզեան Յ. Յ., Կիլիկիոյ աղէտը, Ա. մաս, Կ. Պոլիս, 1912, էջ 44:

3 «Բիւզանդիոն», 3818, ապրիլ 21-4 մայիս, 1909, էջ 3:

ցին ուղղված (Կ. Պոլիս, 4-ը մայիս 1909 թվակիր) պատասխան-նամակում Հովհաննես եպիսկոպոս Արշարունին գրում է. «Մինչ ցարդ Պատրիարքարանս հասած բազմաթի հեռագրեր ու թուղթեր կը գումեմ Կիլիկիոյ զանազան կողմերը տեղի ունեցած ահարկու կոտորածներէն... ազգային հաստատութիւնք և առհասարակ բոլոր շէնքեր հրդեհուած են՝ մոխիրներու խառնուած բազմաթիւ անձերու աճիւններով, որոնք ապաստանած էին այդ շէնքերուն մէջ՝ կոտորածէ խուսափելով...»:<sup>4</sup>

1909 թ. կոտորածների ընթացքում հայկական հոգևոր, կրթամշակութային հաստատությունների առավել մեծ ծավալի ոչնչացում արձանագրվեց մասնավորապես երկրորդ ջարդի ընթացքում՝ ապրիլի 12-ից սկսած, երբ կանոնավոր զորաջոկատները համալրվեցին և նոր ուժով հարձակման անցան:<sup>5</sup> Այդ հաստատությունների թվում էին Ադանայի Սբ Ստեփանոս եկեղեցին և նրա բակում գտնվող Աշխենյան իգական գույգ վարժարանները, Մուշեղյան (նախկինում՝ Աբգարյան) վարժարանը,<sup>6</sup> հայ կաթոլիկ Թերզյան վարժարանն ու եկեղեցին, հայ բողոքական դպրոցն ու եկեղեցին,<sup>7</sup> Ֆրանսիացի հիսուսյանների (ճիգվիտներ) դպրոցը, եկեղեցին<sup>8</sup> և այլ հաստատություններ: Քաղաքի հայկական շինություններից միայն Սբ Աստվածածին Մայր եկեղեցին և նրա բակում գտնվող Ազգային առաջնորդարանն ու Արամյան նախակրթարանն ազատվեցին հրկիզումից:<sup>9</sup> Ադանայի հայ բողոքականության առաջնորդ Համբարձում Հ. Աշճյանի վկայությամբ՝ կառավարության հրամանով առաջին ջարդի հետևանքով վիրավորված հայերի մի մասին՝ թուրք զինվորներն իբրև գերիների, տեղափոխեցին քաղաքի Աշխենյան, իսկ զգալի թվով վերապրողների՝ Աբգարյան վարժարաններ՝ առաջինը որպես հիվանդանոց, երկրորդը՝ ապաստարան գործածելով: Երկու վարժարաններն էլ, սակայն, զինվորները երկրորդ ջարդի ընթացքում ամբողջովին հրկիզեցին՝ ներսում գտնվող մարդկանց հետ մեկտեղ,<sup>10</sup> որոնց թվում էին նաև առաջին ջարդից հետո խուճապահար քաղաք տեղափոխված հարակից մի քանի գյուղերի՝ Ինճիրլիկի, Շեյխ-Մուրատի, Ապտոլուի, Գյավուր-քյոյի հարյուրավոր բնակիչներ:<sup>11</sup>

Ադանայում ամերիկյան միսիոներության ղեկավար Ու. Ն. Չեմբրոսը Մերսինից 1909 թ. մայիսի 1-ին ջարդերի մասին Լոնդոն հեռագրելով՝ փաստում է հետևյալը. «Չարդը կատաղաբար վերսկսաւ կիրակի օրը: Ապրիլ 12/25ին, զօրքերն ու բաշխբզուկները սարսափելի հրացանաձգութիւն մը սկսան Հայոց վարժարանին վրայ, ուր երկու հազար (2000) անձինք ապաստանած էին: Իսկոյն հրդեհեցաւ շէնքը... Աւերիչ հրդեհն անխափան շարունակեցաւ մինչէւ առաւօտ, հրոյ ճարակ ըլլալով չորս եկեղեցիք և անոնց դպրոցները»:<sup>12</sup> Սուրեն Պարթևյանը, որ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից ջարդերից անմիջապես հետո Ադանա ուղարկված օգնության հանձնախմբի անդամ էր և անձամբ ականատես է եղել կատարվածին, ապրիլի 17/30-ին գրում է. «... Ատանայի մէջ Հայ տուն, շուկայ և ազգային

4 «Արարատ», մայիս-յունիս, 1909, էջ 525:

5 Օրմանեան Մ., Ազգապատում, հտ. Գ., Էջմիածին, 2001, էջ 5869:

6 Թերզեան Յ. Յ., Ատանայի կեանքը, Կ. Պոլիս, 1909, էջ 23:

7 Աշճեան Հ. Յ., Ատանայի եղեռնը եւ Գոնիայէլ յուշեր, Նիւ Եորք, 1950, էջ 138:

8 Brézol G., Les Turcs ont passé là..., Recueil de documents, dossiers, rapports, requêtes protestations, suppliques et enquêtes, établissant la vérité sur les massacres d'Adana en 1909, Paris, 1911, p. 22-23.

9 Թերզեան Յ. Յ., Ատանայի կեանքը, էջ 23,46:

10 Աշճեան Հ. Յ., նշվ. աշխ., էջ 22, տե՛ս նաև Թերզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 59:

11 Տօնիկեան Կ. Յ., Կեանքիս Յուշերը 1900-1972, Պէլրոյթ-Լիբանան, 2004, էջ 20, նաև Թերզեան Յ., նույն տեղում, էջ 102-103:

12 «Բիւզանդիոն», 3,822, ապրիլ 25-8 մայիս, 1909, էջ 3:

հաստատության գրեթե չէ մնացած... Մուշեղեան դպրոցն ու նոր շուկան, որ դեպքէն սկիզբը վրիպած էին հրդեհէն, այրուել մոխրացել են, իրենց մեջ ապաստանած հարիւրաւոր էակներ ածխացնելով: Եկեղեցիներէն մէկը միայն դեռ կրմնայ Առաջնորդարանին հետ...»: <sup>13</sup>

Հայկական մշակութային այն շինությունները, որոնք հնարավոր էր հրկիզել, թուրքերն իրագործում էին «քարյուղի» (նավթ) օգնությամբ, ընդ որում՝ եկեղեցիների ու մզկիթների բարձունքներից ջրհանների միջոցով ոչ թե ջուր, այլ «քարյուղ» լցնելով, <sup>14</sup> իսկ այնտեղ, որտեղ հնարավոր չէր հրկիզել, ինչպես օրինակ՝ Տարսոնի Սբ. Պողոս քարաշեն եկեղեցին, ջարդարարները գործի էին դնում իրենց բարբարոսական վարքագիծը՝ ավերելով կամ պղծելով մշակութային հաստատությունը: <sup>15</sup> Օտարերկրյա ականատեսներից մեկի վկայությամբ՝ «Կրակը մարելու փոխարէն հրշէջները դեկավարութեան հրամանով բոլոր քարէ շինությունները՝ դպրոցներ, եկեղեցիներ, ողողեցին քարիւղով և շուրջ քսան հազար բնակչութեան տնքոցներին, աղաղակներին ու զէնքերի չդադարող հրաձգութիւններին գուգահեռ քաղաքը մատնուեց թալանի և վերածուեց աւերակների»: <sup>16</sup>

1909 թ. կոտորածների ընթացքում հայկական մշակութային արժեքների ոչնչացման բարբարոսական գործողությունների դիպուկ նկարագիրը տալիս է Քեսասի (գյուղաքաղաք Հալեպի նահանգում) ջարդերին ականատես ուն Բեն-Իբրահիմը, ով, վկայելով հայերի նկատմամբ իրագործած թուրքական ոչնչացման քաղաքականության մասին, փաստում է հետևյալը. «Վայրենի խաշնարածներին յատուկ վայրագութեամբ... ջարդարարները այրում են տները, դպրոցները, եկեղեցիները, բացառութիւն չանելով և օտարահպատակների համար...»: <sup>17</sup>

Թուրքական զորքերը չխնայեցին անգամ Ճամբ-Գյոլի մոտ գտնվող ասորական այն միակ եկեղեցին ու կից դպրոցը, ուր ասորի բնակչության հետ ապաստանել էին նաև զգալի թվով հայեր. սպանելով ասորի քահանայի միակ որդուն ու վիրավորելով նրան՝ թուրքերը հրկիզեցին դպրոցն ու եկեղեցին: <sup>18</sup>

Անգամ ապաստանյալների կողմից եկեղեցիներից պարզած սպիտակ դրոշների առկայությունը, որը խաղաղության աղերս էր ենթադրում, չկանգնեցրեց մոլեռանդ ջարդարարներին: Այս երևույթի մասին են փաստում ինչպես Հաճնում ամերիկյան միսիոներուհի Ռոուզ Լամբերդի, <sup>19</sup> այնպես էլ Հաճնում Ֆրանսիայի գլխավոր հյուպատոս Դյուպարիի <sup>20</sup> հաղորդած տեղեկությունները: Ըստ Դյուպարիի՝ «Հաջինում հայկական եկեղեցիների վրայ պարզած է սպիտակ դրոշակ (խնայելու աղերս), բայց կատաղած մոլեռանդները դրան ուշադրութիւն չեն դարձնում եւ շարունակում են գրնդակահարել: Կրակը լսփում է մէկ թաղ միսի յետեւից: Ապրիլի 21ին (ն. տոմ.) այրուել է հայոց վանքը և այնտեղ ապաստանած բոլոր հայերը կոտորուել են. ոչ ոք չի կարողացել փրկուել...»: <sup>21</sup>

Հայկական մշակութային այն շինությունները, որոնք հնարավոր էր հրկիզել, թուրքերն իրագործում էին «քարյուղի» (նավթ) օգնությամբ, ընդ որում՝ եկեղեցիների ու մզկիթների բարձունքներից ջրհանների միջոցով ոչ թե ջուր, այլ «քարյուղ» լցնելով, իսկ այնտեղ, որտեղ հնարավոր չէր հրկիզել, ինչպես օրինակ՝ Տարսոնի Սբ. Պողոս քարաշեն եկեղեցին,

13 Պարթեւեան Ս., Կիլիկեան արհաւիրքը, Կ. Պոլիս, 1909, էջ 31:

14 Թերզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 103:

15 Նույն տեղում, էջ 165:

16 Аданские черные дни, издание Х.А.Вермишева, Баку, 1909, стр. 8.

17 Տէն, «Արարատ», մայիս-յունիս, 1909, էջ 538-539:

18 Թերզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 44,105:

19 «Բիւզանդիոն», 3818, ապրիլ 21-4 մայիս, 1909, էջ 3:

20 «Արարատ», մայիս-յունիս, 1909, էջ 526-528:

21 Նույն տեղում, էջ 527:

ջարդարարները գործի էին դնում իրենց բարբարոսական վարքագիծը՝ ավերելով կամ պղծելով մշակութային հաստատությունը: Օտարերկրյա ականատեսներից մեկի վկայությամբ՝ «Կրակը մարելու փոխարեն հրշեջները ղեկավարության հրամանով բոլոր քարե շինությունները՝ դպրոցներ, եկեղեցիներ, ողողեցին քարիւղով և շուրջ քսան հազար բնակչության տնօրոցներին, աղաղակներին ու գէնքերի չղաղարող հրաձգություններին զուգահեռ քաղաքը մատնուեց թալանի և վերածուեց աներակների»:

Որոշ դեպքերում թուրք զինվորները նախքան եկեղեցին ավերելը՝ պղծել կամ կեղծ նմանակման միջոցով ծաղրել են քրիստոնեական եկեղեցու խորհուրդն ու եկեղեցականներին: Այսպես, 1909 թ. Տարսնում բնակչության ջարդն ավարտելուց և Սուրբ Աստվածածին (Պողոս Առաքյալ) հայկական եկեղեցին ամբողջովին կողոպտելուց հետո թուրք զինվորները փորձել են բոլոր կողմերից հրդեհել այն: Չկարողանալով հրդեհել քարաշեն այդ եկեղեցին՝ վերջիններս կրոնական քինախնդրությամբ նախ քանդել են եկեղեցու խորանը, ապա՝ պղծել այն՝ խորանն օգտագործելով որպես արտաքնոց:<sup>22</sup> Թուրք ամբոխի կողմից Տարսնի հայկական թաղամասի և եկեղեցու ավերման մասին է փաստում մահ ամերիկացի լրագրող, իրավաբան Հերբերտ Ադամս Գիբբոնսը, ով անձամբ ականատես է եղել 1909 թ. թուրքերի վայրագություններին: Գիբբոնսի վկայությամբ՝ «Տարսնի հայոց մեծ պատմական եկեղեցին, որ քաղաքին ամենակարեւոր շէնքն էր, թալանուեցաւ, մարմարիոնէ արձանք քանդուեցան, պատմական սեղանք քար ու քանդ եղան, և տանելի ամէն բան աւարի տրուեցաւ: Բայց շէնքը դիմադրեց հրձիգութեան փորձերուն»:<sup>23</sup> Ըստ որոշ ականատեսների՝ Տարսնի հիշյալ եկեղեցին վերջնական ավերումից փրկվեց ու կանգուն մնաց տեղի թուրք բնակչության շնորհիվ, որոնք, հիացած այդ շինության գեղեցկությամբ ու ամրությամբ, փորձեցին պահպանել այն՝ հետագայում մզկիթի վերածելու ակնկալիքով:<sup>24</sup>

Արձանագրվել են դեպքեր, երբ հայկական հոգևոր հուշարձանների ավերումը թուրք ամբոխի կողմից վերածվում էր խրախճանքի՝ դրան հաղորդելով ծիսական-արարողական բնույթ: Ջարդերին ականատես Գրիգոր Գուտույանի (ուսուցիչ Բախչեում՝ Ջերել-Բերեքթեթի գավառ) վկայությամբ՝ Լաբաճը գյուղում մոլեռանդ խուժանը մյուտիբ Իսմայիլ Էֆենդիի՝ «Սուլթան Համիտ չօգ եաշա» (կեցցն սուլթան Համիդը) ազդանշանից հետո նախ հրկի- գել է տեղի հայկական դպրոցը, ապա՝ եկեղեցին՝ պար բռնելով դրանց շուրջ:<sup>25</sup> Իսկ Օսմանիե գյուղում թուրքական զորքերը, պաշարելով տեղի հայ լուսավորչական եկեղեցին, ուր ապաստանել էր շուրջ 500 հայ, «քարյուղով» հրկիզել են այն և դիու-գուռնայի նվազակցությամբ պար բռնել նրա շուրջը:<sup>26</sup> Գեպքին ականատես-վերապրողի վկայությամբ՝ «Գուրսը դիու-գուռնան կը զարնուէր և խուժանը պար բռնած խրախճանություններ կը կատարէր... Ջէնքերու գոռումները, զինուորական փողահարությունները, հրդեհներու մարդակեր բոցերուն ճարձատիւնները, դիու գուռնաներու ձայները, այրուողներու սրտակսկիծ ճիչերն ու խուժանին վայնասունները, իրար խառնուած ահռելի վիճակ մը ստեղծած էին»:<sup>27</sup> Ադանայում գերմանական հիվանդանոցի բուժքույրերից մեկի վկայությամբ՝ նույն Օսմանիե գյուղի հայ բողոքական եկեղեցին թուրքերը հրկիզեցին եկեղեցական արարողության ժամանակ՝ ներսում գտնվող 17 մարդկանցով, որոնց թվում և մեկ ամերիկյան միսիոներ և մեկ բողոքական քարոզիչ:<sup>28</sup>

22 Տե՛ս Թերզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 165, ինչպէս նաև «Արարատ», յուլիս-օգոստոս, 1909, էջ 673:

23 «Բիւզանդիոն», 3818, ապրիլ 21-4 մայիս, 1909, էջ 3:

24 Թէոդիկ Արշակուհի, Ամիս մը ի Կիլիկիա, Կ. Պօլիս, 1910, էջ 205-207:

25 Գուտույեան Գ.Գ., Հայ լեռը. կարմիր դրուագներ Կիլիկիոյ աղէտէն, Կ. Պոլիս, 1912, էջ 42-43:

26 Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 197-199:

27 Նույն տեղում, էջ 197:

28 Սարգիսեան Յ., Ատանայի եղէտը. տեղեկագիր Յակոբ Պապիկեանի, Կ. Պոլիս, 1919, էջ 15, տե՛ս նաև

1909 թ. թուրքական բարբարոսական գործողություններից զերծ չմնացին անգամ հայկական գերեզմանոցները, ինչպես օրինակ՝ Մերսինի հայկական գերեզմանատունը, որը տեղի մյութետերիֆի (սանջակի ղեկավար) կարգադրությամբ, զենք փնտրելու պատրվակով խուզարկվեց ու անարգվեց: Սուրեն Պարթևյանի վկայությամբ՝ «Գերեզմանները բացուեցան, մեռելները դուրս հանուեցան, որպեսզի թագնուած զենքեր գտնուին անոնց պատանքներուն մէջէն... Այս անարգութիւնը կատարուեցաւ, առանց գոնէ կանխաւ իմաց տրուելու Մերսինի Հայոց թաղական խորհուրդին կամ տէրտէրին»:<sup>29</sup>

Թուրքերի մղեռանդությունն առավել դրսևորվել է քրիստոնյա, տվյալ դեպքում՝ հայ հոգևոր առաջնորդների ջարդն իրագործելիս՝ դարձյալ դրան հաղորդելով ծիսական-արարողական բնույթ: Նման օրինակները շատ են եղել նաև 1909 թ. կոտորածների ժամանակ: Լավագույն օրինակը ապրիլի 3-ին Բախչե գյուղում Տեր Վահան (Ստեփանյան) քահանայի սպանությունն էր, որը գյուղի բնակիչների մեծ մասի հետ սպասատանել էր տեղի մզկիթում: Մյուֆթիի (բարձրաստիճան հոգևորական, կրոնաիրավական հարցերում մեծ հեղինակություն վայելող) կարգադրությամբ քահանային սպանում են բռնությամբ մզկիթից դուրս բերելուց ու դաժան չարչարանքների ենթարկելուց հետո: Դեպքին ականատես Նուֆուս Մեմուրուն, որ ջարդերին մասնակից չի եղել, իր հուշատետրում գրել է. «Մյուֆթին հասած էր իր նպատակին, իր ոխերին Տ. Վահանը չկար այլևս. միւֆթին ուրախութենէն զզլխած կը սկսի պարել եւ մզկիթին առջեւ երիցս «փատիշահըմ չօզ եաշա» գոչել կը հրամայէ արիւնկզակ խուժանին»:<sup>30</sup> Անտիոքում 1909 թ. ապրիլի 6-ին ջարդարարները տեղի Հայ առաջնորդարանը շրջափակելուց, եկեղեցական գույքն ամբողջովին կողոպտելուց և հոգևորականությանը (կաթողիկոսի փոխանորդ Տ. Արսեն վարդապետ, Կոտուց անապատի վանքի միաբանությունից հյուր եկած Տ. Դանիել վարդապետ, Տ. Արմենակ քահանա Տոնաթոսյան և այլք) զազանաբար սպանելուց հետո վերջիններին դիակները քարշ են տվել քաղաքի փողոցներով՝ կոչ անելով հավաքված մուսուլման բնակչությանը բնաջնջել տեղի քրիստոնյաներին:<sup>31</sup>

Այսպիսով, 1909 թ. կոտորածների ընթացքում զգալի էր նաև հայկական մշակութային ժառանգության կորուստը: Համաձայն Մաղաքիա Օրմանյանի (1896-1907 թթ. Կ. Պոլսի հայոց պատրիարք) տեղեկագրի՝ միայն Ադանայի նահանգի հաշվառված 37 գյուղերում ու քաղաքներում 1909 թ. ջարդերի հետևանքով հրկիզվել կամ ավերվել են 50-ից ավելի հայկական եկեղեցիներ ու դպրոցներ,<sup>32</sup> որոնցից միայն Ադանա քաղաքում՝ 6 եկեղեցի, 5 դպրոց, իսկ Ջերեկ-Բերեքեթի գավառում (Ադանայի նահանգ)՝ 6 եկեղեցի, 12 դպրոց:<sup>33</sup> Համեմատության կարգով նշենք, որ 1901-1902 թթ. դրությամբ Ադանայի նահանգում գործող հայ ազգային վարժարանների թիվը նվազագույնը 36-ն էր՝ 3973 աշակերտներով (ներառված չեն հայ կաթոլիկ և բողոքական համայնքներին պատկանող դպրոցները, որոնք ևս զգալի թիվ են կազմել),<sup>34</sup> իսկ 1904 թ. դրությամբ նահանգում գործող հայկական վանքերի ու եկեղեցիների (առաքելական, կաթոլիկ, բողոքական) թիվը՝ 82-ը:<sup>35</sup>

Թերզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 314:

29 Պարթևեան Ս., նշվ. աշխ., էջ 79:

30 Գուտուլեան Գ.Գ., նշվ. աշխ., էջ 45-46:

31 Թերզեան Յ., նշվ. աշխ., էջ 255:

32 Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 5869-5870:

33 Adossidès A., Arméniens et Jeunes-Turcs. Les massacres de Cilisie, Paris, 1910, p. 104-105.

34 Հաշվումները կատարված են մեր կողմից: Տես Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանաց Թուրքիոյ, տետր Բ., վիճակ 1901-1902 տարւոյ, Կ. Պոլիս, 1903:

35 Հայ եկեղեցւոյ թեմերը, եկեղեցիները եւ վանքերը ըստ «Ս. Փրկիչ Հիվանդանոցի Ընդարձակ Օրացոյցին», 1904, Կ. Պոլիս, տես Հայ ընտանիք, 1985, Ս. Ղազար-Վենետիկ, Մխիթարեան հրատարակութիւն, էջ 36-41:

Ադանայի նահանգի առաջնորդական վիճակների պաշտոնական տեղեկագրի համաձայն՝ 1909 թ. ջարդերի հետևանքով միայն Ադանա նահանգում հրկիզվել է 24 եկեղեցի, 16 դպրոց<sup>36</sup>: Հարկ է նշել, որ պաշտոնական այս տեղեկագրում կան բազմաթիվ անճշտություններ ու բացթողումներ. մասնավորապես՝ հրկիզված հայկական եկեղեցիների ու դպրոցների շարքում բաց են թողնված Ջեյհան (նախկինում՝ Համիդիե)<sup>37</sup>, Շեյխ-Մուրադ (Հայ գյուղ, հրկիզվել են ն դպրոցը, ն եկեղեցին)<sup>38</sup>, Ինճիրլի<sup>39</sup>, Լաբաճը (ն դպրոցը, ն եկեղեցին հրկիզվել են)<sup>40</sup>, Քելեր (Իսլահյե գավառակում)<sup>41</sup>, Հարունիե (Խառնի)<sup>42</sup>, Գոզլուզ<sup>43</sup>, Միսիս (Մամեստիա, եկեղեցին ավերված է, դպրոցը՝ հրկիզված)<sup>44</sup> գյուղերի եկեղեցիներն ու դպրոցները: Տեղեկագրում ընդգրկված չեն նաև Հալեպի նահանգում իրագործված ջարդի հետևանքները. այսպես՝ ամբողջովին հրկիզվել կամ ավերվել են Անտիոքի (Անթաքիա) հայ առաքելական և բողոքական եկեղեցիները<sup>45</sup>, Քեսապի հայ կաթոլիկ ու բողոքական եկեղեցիները<sup>46</sup> և այլ մշակութային հաստատություններ:

Վերոնշյալ պաշտոնական ցուցակագրությունից բացի, Ադանայի ջարդերից հետո թուրքական մամուլի էջերում հրատարակվել են մարդկային և նյութական կորուստները ներկայացնող կեղծ ցուցակներ, որոնցում ջարդերի ընթացքում հայերի կրած կորուստները գրեթե կրկնակի նվազեցված են<sup>47</sup>: Ավաճի լավագույն օրինակը 1909 թ. հուլիսին թուրքական «Թանին» թերթում տպագրված ցուցակն է, որտեղ ներկայացված նյութական կորուստները, այդ թվում և ավերված ու հրկիզված հայկական եկեղեցիների ու դպրոցների թիվը հասցված է նվազագույնի<sup>48</sup>: Հարկ է նշել, որ թե՛ 1894-1896 թթ. և թե՛ 1909 թ. կոտորածների ժամանակ հրկիզված ու քանդված հայկական եկեղեցիների, վանքերի ու դպրոցների զգալի մասը հետագա տարիներին գերազանցապես հայ բնակչության նախաձեռնությամբ ու միջոցներով վերանորոգվել կամ վերակառուցվել է,<sup>49</sup> սակայն 1915 թ. և հատկապես բնակչության տեղահանությունից հետո վերջնականապես ոչնչացվել:

36 Թ-երզեան Յ., Կիլիկիոյ աղետը, էջ 254:

37 Տե՛ս «Տեղեկագիր Այրիախնամ Յանճնաժողովի», քննիչ-պատուիրակ՝ Պ. Ժագ Սայապալեան, 1910, սեպտ. 11-1912 սեպտ. 11, Դլաբաթիա, էջ 63, ինչպես նաև Արշակունի Թ-եղիկ, նշվ. աշխ., էջ 141-142, ինչպես նաև Brézol G., Les Turcs ont passé là..., p. 341.

38 Թ-երզեան Յ., Կիլիկիոյ աղետը, էջ 215-216, նաև Ջապել Եսայեան, Աերակներուն մէջ, Պէրյութ, 1957, էջ 90-91:

39 Թ-երզեան Յ. Յ., Ատանայի կեանքը, էջ 23:

40 Գուտուլեան Գ.Գ., նշվ. աշխ., էջ 42-43, ինչպես նաև «Տեղեկագիր Այրիախնամ Յանճնաժողովի», էջ 69, 72:

41 Տեղեկագիր Այրիախնամ Յանճնաժողովի, էջ 72:

42 Նույն տեղում, էջ 83:

43 Նույն տեղում, էջ 77:

44 Թ-եղիկ Արշակունի, նշվ. աշխ., էջ 135:

45 Թ-երզեան Յ., Կիլիկիոյ աղետը, էջ 255-256

46 Տեղեկագիր Այրիախնամ Յանճնաժողովի, էջ 16:

47 Brézol G., Les Turcs ont passé là..., p. 381-385

48 Նույն տեղում, էջ 381-383:

49 1912-1913 թթ. դրությամբ Ադանայի նահանգում գործել է հայկական 44 եկեղեցի, 5 վանք, 63 դպրոց՝ 5834 աշակերտներով, իսկ Հալեպի նահանգում՝ 93 եկեղեցի, 16 վանք, 113 դպրոց՝ 8451 աշակերտներով: Տե՛ս Kévorkian R. H., Paboudjian P. B., Les Arméniens Dans L'Empire Ottoman Ala Veille Du Génocide, Paris, 1992, p. 57-60. Տե՛ս նաև Սաֆրաստյան Ա. Խ., Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքարանի կողմից Թուրքիայի Արդարադատության և Դավանանքների մինիստրության ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները (1912-1913 թթ.), «Էջմիածին», Ա (Հունվար), 1965, էջ 40-42:

Seda Parsamyan

**The Mecanisms of Implementation of Cultural Genocide During the 1909 Massacres in Adana and Adjacent Regions and its Consequences**

Summary

Numerous facts testify that during the Hamidian massacres of 1894-1896, and the Adana massacres of 1909, as well as during the Armenian Genocide (1915-1923) massacres were accompanied by the destruction of the Armenian cultural monuments, values; namely, the demolition of schools and historical-architectural monuments, which completely fits with the description of the cultural genocide. This article observes the methods of the destruction of the educational-cultural and religious buildings in Adana and its consequences. During the 1909 massacres the Turkish perpetrators saw the Armenian religious-cultural buildings as appropriate places for implementing their genocidal action, which though uncontrollable, yet included certain ceremonial, religious and ritual elements and by targeting them, the Turkish perpetrators also aimed to disgrace the Armenian religious-cultural establishments.